Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 10 -ի N 981 - Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 202 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲՆԱԿԱՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ԿԱՄ ՉՄՇԱԿՎԱԾ, ԲԱՅՑ ՉՇՐՋԱՆԱԿՎԱԾ ԿԱՄ ՉԱՄՐԱՑՎԱԾ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ (ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 710210000, 710221000, 710231000), ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՉՄՇԱԿՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ՋԱՐԴՈՆԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ

1. Սույն կարգի դրույթներով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ներմուծվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների (ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 710210000, 710221000, 710231000), թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի չմշակված թանկարժեք մետաղների, ջարդոնի և թանկարժեք մետաղների թափոնների, թանկարժեք մետաղների հանքաքարի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) մաքսային ձևակերպման համար թույլտվությունների ստացման հետ կապված հարաբերությունները:

2. «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի շրջանակներում մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու նպատակով իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտարարատու) թղթային կամ էլեկտրոնային (secretariat@customs.am) եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 5 ձևի.

2) հումքի նյութերի ու կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրերի (պայմանագրերում ներառելով տեղեկատվություն վերամշակման արդյունքով ստացված ապրանքների արտահանման վերաբերյալ) պատճենները.

3) հաշիվ-ապրանքագրերի պատճենները.

4) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողության ակտը և վերամշակման նպատակով հաստատված ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի և վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերաբերյալ ցանկերը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված հաշվարկը.

6) տեղեկություններ ապրանքների վերամշակման արդյունքների նույնականացման առաջարկվող եղանակի մասին.

7) տեղեկություններ ներմուծված ապրանքների վերամշակման գործընթացների և (կամ) համարժեք ապրանքներով փոխարինման մասին, եթե այդպիսի փոխարինում նախատեսվում է:

3. Թույլտվություն ստանալու նպատակով հայտարարատուն կարող է դիմել լիազոր մարմին մատակարարման կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրի ստորագրման պահից: Ապրանքների վերամշակման ժամկետի հաշվարկը մեկնարկում է դրանք «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից, իսկ ապրանքների առանձին խմբաքանակների (մի քանի խմբա-

քանակների) մաքսային հայտարարագրում իրականացնելու դեպքում՝ ապրանքների առաջին խմբաքանակը նշված համապատասխան մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից:

4. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության համար:

5. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է թույլտվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված N 2 ձևի, երկու օրինակից, որոնցից առաջին օրինակն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտարարատուին, իսկ երկրորդ օրինակը պահվում է լիազոր մարմնում:

6. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո թերի լինելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը դրա մասին պատշաճ ձևով ծանուցում է հայտարարատուին:

7. Հայտարարատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

8. Թույլտվություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե չեն պահպանվել սույն կարգի 2-րդ և 7-րդ կետերի պահանջները:

9. Լիազոր մարմնի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի հիմնավորված մերժումը, երկու աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր՝ առձեռն կամ փոստային, կամ էլեկտրոնային եղանակով տրամադրվում է հայտարարատուին՝ նշելով մերժման հիմքերը:

10. Թույլտվության տրամադրման մերժումը հայտարարատուն կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

11. Եթե ապրանքների վերամշակման ընթացքում ի հայտ եկած տեխնոլոգիական առանձնահատկությունների հետևանքով առաջանում է շեղում թույլտվության համար ներկայացված հաշվարկից, ապա հայտարարատուն դիմում է լիազոր մարմին թույլտվության մեջ փոփոխություն կատարելու համար՝ ներկայացնելով մատակարարների հետ ներմուծվող ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի փոփոխության վերաբերյալ պայմանագրի պատճենը, հաշվարկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման 1-ին կետով սահմանված N 1 հավելվածի, և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշման N 9 հավելվածի N 1 ձևով սահմանված ցանկ:

12. Բացառությամբ սույն կարգի 11-րդ կետում նշված փոփոխության՝ անհրաժեշտության դեպքում, սույն կարգով թույլտվություն ստացած անձն անձնական տվյալների փոփոխության դեպքում լիազոր մարմնին թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է այդ փոփոխությունների մասին՝ ներկայացնելով դրանք հաստատող փաստաթղթեր:

13. Լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է թույլտվություն ստացած անձի ներկայացրած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխում է թույլտվությունը:

14. Թույլտվությունները հաշվառվում են մաքսային մարմնի կողմից սահմանված՝ հաշվառման գրանցամատյանում (թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով վարվող) ձևին համապատասխան:

Ձև N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարատու

_____

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը)

_____

(հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (առկայության դեպքում)

_____

(վերամշակման գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը)

Վերամշակում իրականացնող անձ (լրացվում է, եթե հայտարարատուն և վերամշակում իրականացնող անձը տարբեր են)

_____

(իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, գտնվելու վայրը)

_____

(հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (առկայության դեպքում)

_____

(վերամշակման գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը

_____

Տեղեկություններ

_____

(ապրանքների վերամշակման արդյունքների նույնականացման առաջարկվող եղանակի մասին)

_____

(ներմուծված ապրանքների վերամշակման գործընթացների և (կամ) համարժեք ապրանքներով փոխարինման մասին, եթե այդպիսի փոխարինում նախատեսվում է)

Խնդրում եմ տրամադրել մաքսային տարածքում ապրանքների վերամշակման թույլտվություն:

Դիմումին կից ներկայացնում եմ՝

1) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողության ակտը և վերամշակման նպատակով հաստատված ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի և վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերաբերյալ ցանկերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված հաշվարկը.

2) հումքի նյութերի ու կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրերի (պայմանագրերում ներառելով տեղեկատվություն վերամշակման արդյունքով ստացված ապրանքների արտահանման վերաբերյալ) պատճենները.

3) հաշիվ-ապրանքագրերի պատճենները.

4) այլ փաստաթղթեր (ցանկության դեպքում):

_____

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

____ _____ 20 թ. »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 10 -ի N 981 - Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 3-ի N 202 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ՝ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԲՆԱԿԱՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ԿԱՄ ՉՄՇԱԿՎԱԾ, ԲԱՅՑ ՉՇՐՋԱՆԱԿՎԱԾ ԿԱՄ ՉԱՄՐԱՑՎԱԾ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ (ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 710210000, 710221000, 710231000), ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՉՄՇԱԿՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ՋԱՐԴՈՆԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ

1. Սույն կարգի դրույթներով կարգավորվում են «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով արտահանվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների (ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 710210000, 710221000, 710231000), թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի չմշակված թանկարժեք մետաղների, ջարդոնի և թանկարժեք մետաղների թափոնների, թանկարժեք մետաղների հանքաքարի և թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) մաքսային ձևակերպման համար թույլտվությունների ստացման հետ կապված հարաբերությունները:

2. «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի շրջանակներում մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն (այսուհետ՝ թույլտվություն) ստանալու նպատակով իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտարարատու) առձեռն կամ էլեկտրոնային (secretariat@ customs.am) եղանակով

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ լիազոր մարմին) է ներկայացնում հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 6 ձևի.

2) հումքի նյութերի ու կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրերի (պայմանագրերում ներառելով տեղեկատվություն վերամշակման արդյունքով ստացված ապրանքների արտահանման վերաբերյալ) պատճենները.

3) հաշիվ-ապրանքագրերի պատճենները.

4) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական վերահսկողության ակտը և վերամշակման նպատակով հաստատված ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի և վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերաբերյալ ցանկերը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված հաշվարկը.

6) տեղեկություններ ապրանքների վերամշակման արդյունքների նույնականացման առաջարկվող եղանակի մասին.

7) տեղեկություններ ներմուծված ապրանքների վերամշակման գործընթացների և (կամ) համարժեք ապրանքներով փոխարինման մասին, եթե այդպիսի փոխարինում նախատեսվում է:

3. Թույլտվություն ստանալու նպատակով հայտարարատուն կարող է դիմել լիազոր մարմին մատակարարման կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատար-

ման) պայմանագրի ստորագրման պահից: Եթե ապրանքները «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպելու նպատակը դրանց վերանորոգումն է, ապա որպես թույլտվություն կարող է օգտագործվել մաքսային հայտարարագիրը: Ապրանքների վերամշակման ժամկետի հաշվարկը մեկնարկում է դրանք «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից, իսկ ապրանքների առանձին խմբաքանակների (մի քանի խմբաքանակների) մաքսային հայտարարագրում իրականացնելու դեպքում՝ ապրանքների առաջին խմբաքանակն այդ մաքսային ընթացակարգով ձևակերպելու օրվանից:

4. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականության և արժանահավատության համար:

5. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է թույլտվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված N 2 ձևի, երկու օրինակից, որոնցից առաջին օրինակն առձեռն տրվում կամ ուղեկցող գրությամբ (փոստով) ուղարկվում է հայտարարատուին, իսկ երկրորդ օրինակը պահվում է լիազոր մարմնում:

6. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը լիազոր մարմնում մուտքագրվելուց հետո թերի լինելու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը դրա մասին պատշաճ ձևով ծանուցում է հայտարարատուին:

7. Հայտարարատուն փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

8. Թույլտվություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից մերժվում է, եթե չեն պահպանվել սույն կարգի 2-րդ և 7-րդ կետերի պահանջները:

9. Լիազոր մարմնի կողմից թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի հիմնավորված մերժումը մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր՝ առձեռն կամ փոստային, կամ էլեկտրոնային եղանակով տրամադրվում է հայտարարատուին՝ նշելով մերժման հիմքերը:

10. Թույլտվության տրամադրման մերժումը հայտարարատուն կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Անհրաժեշտության դեպքում, սույն կարգով թույլտվություն ստացած անձն անձնական տվյալների փոփոխության դեպքում լիազոր մարմնին թղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է այդ փոփոխությունների մասին՝ ներկայացնելով դրանք հաստատող փաստաթղթեր:

13. Լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է թույլ-տվություն ստացած անձի ներկայացրած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխում է թույլտվությունը:

14. Թույլտվությունները հաշվառվում են մաքսային մարմնի կողմից սահմանված՝ հաշվառման գրանցամատյանի (թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով վարվող) ձևին համապատասխան:

Ձև N 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարատու_____

(վերամշակում իրականացնող անձի անվանումը, գտնվելու վայրը)

_____

(հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, ֆաքսը (առկայության դեպքում)

_____

(անմիջականորեն ապրանքների վերամշակման գործողություն իրականացնող անձի անվանումը)

_____

(վերամշակման գործունեության իրականացման վայրը և հեռախոսահամարը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը, անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը_____

Տեղեկություններ

_____

(ապրանքների վերամշակման արդյունքների նույնականացման առաջարկվող եղանակի մասին)

_____

(ներմուծված ապրանքների վերամշակման գործընթացների և (կամ) համարժեք ապրանքներով փոխարինման մասին, եթե այդպիսի փոխարինում նախատեսվում է)

Խնդրում եմ տրամադրել մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակման թույլտվություն:

Դիմումին կից ներկայացնում եմ՝

1) հումքի նյութերի ու կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) պայմանագրերի (պայմանագրերում ներառելով տեղեկատվություն վերամշակման արդյունքով ստացված ապրանքների արտահանման վերաբերյալ) պատճենները.

2) հաշիվ-ապրանքագրերի պատճենները.

3) ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից՝ ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի N 1331-Ն որոշմամբ սահմանված կարգով տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածք երրորդ երկրներից ներմուծման պետական

վերահսկողության ակտը և վերամշակման նպատակով հաստատված ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերամշակվող արտադրանքի և վերամշակման նպատակով ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների վերաբերյալ ցանկերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N 139-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված հաշվարկը:

_____

Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

____ _____ 20 թ. »:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ